

ՏԵՂԵԿԱՆՔ

Լոռու մարզի արդյունաբերության ոլորտի 2013թ. 1-ին եռամսյակի աշխատանքների մասին

Ըստ վիճակագրական մարզային ծառայությունից ստացված նախնական տվյալների **2013 թվականի առաջին եռամսյակում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ (գործող) գներով թողարկել են 15,276.0 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2012 թվականի 1-ին եռամսյակի 14,109.98 մլն դրամի դիմաց՝ աճի տեմպը կազմել է 108.3%, բացարձակ աճը՝ 1,166.02 մլն դրամ:**

2013թ. հունվար-մարտ ամիսների ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները ունեն այսպիսի տեսք՝

- *մշակող արդյունաբերություն 12,855.46 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 109.4% և տեսակարար կշիռը՝ 84.2%,*
- *հանքարդյունահանումը համապատասխանաբար՝ 1,797.45 մլն դրամ, 92.6% և 11.8%,*
- *էլ.էներգիայի արտադրությունը՝ 623.09 մլն դրամ, 147.8% և 4.1%:*

Ինչպես և նախորդ տարիներին, ընթացիկ տարվա մարտ ամսին մարզի արդյունաբերական ձեռնարկություններն աստիճանաբար մտնում են իրենց նորմալ աշխատանքային հունի մեջ, իհարկե հաշվի առնելով միջազգային և ներքին շուկաների տենդենցները՝ եթե ընթացիկ տարվա փետրվարին մարզի 36 ձեռնարկություններ չէին սկսել իրենց գործունեությունը, ապա 1-ին եռամսյակի արդյունքներով չեն գործում միայն 10 արդյունաբերական ձեռնարկություն: Ի տարբերություն անցյալ տարվա նույն ժամանակահատվածի, այս տարի մարզի էներգիա արտադրող ընկերությունները զգալիորեն բարելավել են իրենց արտադրական ցուցանիշները՝ 2013թ. 1-ին եռամսյակում մարզում արտադրվել է 33,269.1 հազ. կվտ/ժամ էլ. էներգիա, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 133.0% կամ բացարձակ թվերով ավելի է արտադրվել 8,255.58 հազ. կՎտ*ժամ էլեկտրաէներգիա: Այս տարվա 1-ին եռամսյակից մարզում սկսել է շահագործվել ևս մեկ ՓՀԷԿ (մարզի Տաշիրի տարածաշրջանում, «Պոզիտրոն» ՓՀԷԿ, շահագործող՝ «Այուդա-Լոս» ՍՊԸ): Այսպիսով մարզում գործող ՀԷԿ-երի թիվը հասավ 24-ի: Եթե ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունները փոքր ինչ նվազեցրել են արտադրության ծավալները, ապա էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպությունների ցուցանիշները տպավորիչ են՝ 25 էլեկտրակայաններից միայն 3-ն են նվազեցրել արտադրության ծավալները (2012 թվականի նույն ժամանակաշրջանում արտադրությունը նվազեցրել էին էլեկտրաէներգիա արտադրող 12 ընկերություն):

2013 թվականի 1-ին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե 2 անգամ նվազել է մեքենաշինության-սարքաշինության ճյուղի ձեռնարկությունների արտադրության ծավալները: Մինևնույն ժամանակ ճյուղի ձեռնարկությունները մարտ ամսին, փետրվարի համեմատ մոտ 30%-ով ավելացրել են արտադրության ծավալները: Սպասվում է, որ 2-րդ եռամսյակի արդյունքներով ճյուղի ցուցանիշները կհավասարվեն 2012 թվականի արդյունքներին: 1-ին եռամսյակում նշանակալից են քիմիական արդյունաբերության ցուցանիշները՝ արտադրության ծավալների ավելի քան 2 անգամ աճ:

2013թ. 1-ին եռամսյակում մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է. (հազ. դրամ)

	Ճյուղի անվանումը	2013թ. հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	աճը (%)	2013թ. 1-ին եռամս. տեսակ. կշիռը մշակող արդյունաբերության մեջ (%)
1.	Քիմիական արդյունաբերություն	264,964.0	123,404.0	214.7	2.1
2.	Թեթև արդյունաբերություն	187,686.0	193,687.0	96.9	1.5
3.	Մանրի արդյունաբերություն	574,117.0	459,894.0	124.8	4.5
4.	Մեքենաշինություն և սարքաշինություն	238,300.0	454,144.0	52.5	1.9
5.	Փայտամշակում և կահույքի արտադրութ.	7,535.0	8,091.0	93.1	0.1
6.	Մետալուրգիա	11,523,206.0	10,478,736.0	110.0	89.6
7.	Այլ ճյուղեր	59,648.0	29,301.0	203.6	0.5
	Ընդամենը	12,855,456.0	11,747,257.0	109.4	100.0

2013 թվականի հունվար-մարտին մարզի 13 ձեռնարկություններ դեռևս արտադրանք չեն թողարկել (հունվար-փետրվարին՝ 36 ձեռնարկություն): Դրանք հիմնականում այն ձեռնարկություններն են, որոնց աշխատանքը կապված է սեզոնային գործոնի հետ:

1-ին եռամսյակի արդյունքներով մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 75.43% (փետրվարին՝ 79.86%), «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 6.87% (փետրվարին՝ 6.17%), «Սագամար» ՓԲԸ-ն՝ 4.66% (փետրվարին՝ 4.27%), «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 1.82% (փետրվարին՝ 0.63%), «Ձորագետ-հիդրո» ՍՊԸ-ն՝ 1.78% (փետրվարին՝ 1.37%):

Ըստ տարածաշրջանների 2013 թվականի հունվար-մարտ ամիսներին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

(հազ. դրամ)

Տարածաշրջանի անվանումը	2013թ. հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	Աճը		Տեսակարար կշիռը (%)
			Բացարձակ	(%)	
Սպիտակ	321,945.0	244,008.0	77,937.0	131.9	2.11
Տաշիր	69,621.0	81,173.0	-11,552.0	85.8	0.46
Գուգարք	413,015.0	252,860.0	160,155.0	163.3	2.70
Ստեփանավան	825,175.0	845,450.0	-20,275.0	97.6	5.40
Թումանյան	12,670,063.0	11,766,861.0	903,202.0	107.7	82.94
Վանաձոր	976,184.0	919,629.0	56,555.0	106.1	6.39
Ընդամենը	15,276,003.0	14,109,981.0	1,166,022.0	108.3	100.00

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ըստ տարածաշրջանների մարզի արդյունաբերության արտադրանքի կառուցվածքում զգալի փոփոխություններ չկան: Շարունակում է ընկնել Տաշիրի տարածաշրջանի արդյունաբերության տեսակարար կշիռը, որը կաթ վերամշակող ընկերությունների արտադրության ծավալների նվազման հետևանք է: Հիմնական պատճառը կաթի արտադրության ծավալների անկումն է:

Ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում արդյունաբերական արտադրանքի աճի հետ միասին աճ է արձանագրվել նաև արտահանման ցուցանիշներում՝ արտահանման ծավալն աճել է 18.2%-ով կամ 2,140.6 մլն դրամով:

Չնայած մարզում արդյունաբերական արտադրանքի, նաև արտահանման ծավալների աճի 2013 թվականի հունվար-մարտ ամիսներին մարզի արդյունաբերության ոլորտում աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 4354 մարդ, որը 1.7%-ով կամ 77 մարդով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Ընդ որում ըստ աշխատատեղերի ճյուղային բաշխման, զգալի նվազում է արձանագրված թեթև արդյունաբերության և մեքենաշինության-սարքաշինության ճյուղերում՝ համապատասխանաբար 361 և 65 մարդով, իսկ նշված ճյուղերի ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը գործում են Վանաձորում: Արդյունքում տարածաշրջանային կտրվածքով արդյունաբերության ոլորտում աշխատատեղերի զգալի անկում է արձանագրվել Վանաձոր քաղաքում, 136 մարդով: Սա մտահոգության տեղիք է տալիս:

2013 թվականի առաջին 1-ին եռամսյակում մարզի արդյունաբերության ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ ըստ 22 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2013թ. հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	Բացարձակ աճը
1.	Էլեկտրաէներգիա	մլն. կվտ.ժամ	35.8	27.3	8.5
2.	Էլեկտրաշարժիչներ	հատ	860	1260	-400
3.	Ավտոգենային սարքավորումներ	հազ. հատ	29.0	26.0	3.0
4.	Տրակտորներ	հատ	0	3	-3
5.	Պղինձ՝ պղնձի խտանյություն	տոննա	366.2	428.8	-62.6
6.	Ցինկ՝ ցինկի խտանյություն	տոննա	949.0	975.0	-26.0
7.	Պղինձ կոնվերտորային	տոննա	3013.8	2425.2	588.6

8.	Պղնձի խտանյութ	տոննա	2274.9	2611.4	-336.5
9.	Մինթետիկ կորունդ	կգ.	2614.9	1536.9	1078.0
10	Լաքաներկանյութեր	տոննա	13.0	0.5	12.5
.					
11	Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ	տոննա	178.0	157.0	21.0
.					
12	Շինափայտ	տոննա	0.0	49.3	-49.3
.					
13	Պատանյութեր (միջնորմային սալեր, պեմգաբլոկ, ...)	տոննա	499.5	422.4	77.1
.					
14	Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ	տոննա	631.2	241.9	389.3
.					
15	Ոչ հանքային շինանյութեր	տոննա	6531.0	700.0	5831.0
.					
16	Ալյումինե մետաղապլաստ դռներ, պատուհան.	հատ	52	28	24
.					
17	Կուրտկաներ, տաբատներ, կոմբինիզոններ	հազ. հատ	25.9	21.2	4.7
.					
18	Պանիր	տոննա	28.2	51.6	-23.4
.					
19	Կաթնամթերք (թթվասեր, կաթնաշոռ, մածոն, թան)	տոննա	29.5	25.1	4.4
.					
20	Հաց	տոննա	399.2	497.2	-98.0
.					
21	Հրուշակեղեն	տոննա	24.3	16.0	8.3
.					
22	Մակարոնեղեն	տոննա	6.9	9.8	-2.9
.					

Բնեղեն արտահայտությամբ մարզի արդյունաբերական հիմնական արտադրատեսակների ծավալներն աճել են: Հասկապես պետք է նշել էլեկտրաէներգիայի, սինթետիկ կորունդի, ինչպես նաև շինարարության համար արտադրվող երկաթբետոնյա իրերի ու կոնստրուկցիաների և ոչ հանքային շինանյութերի (շին.ավազ, խիճ, ձեղքված բազալտ) արտադրության ծավալների զգալի աճը:

Ըստ մոտավոր հաշվարկների ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում 2012թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ աճ է արձանագրվել նաև մարզի պայմանական ՀՆԱ-ում, ավելի քան 4.9%-ով:

2013թ. 1-ին եռամսյակում Լոռու մարզի պայմանական ՀՆԱ-ն կազմել է 32.34 մլրդ դրամ, որից.

	2013թ. 1-ին եռ.	տեսա-կարար կշիռը %	2012թ. 1-ին եռ.	
արդյունաբերություն	20.15	62.3	18.19	մլրդ դրամ
գյուղատնտեսություն	2.20	6.8	2.41	մլրդ դրամ
շինարարություն	1.38	4.3	1.37	մլրդ դրամ
առևտուր	5.39	16.7	5.25	մլրդ դրամ
ծառայություններ	3.22	9.9	3.59	մլրդ դրամ

Փաստորեն մարզի ՀՆԱ-ի աճ արձանագրվում է հիմնականում արդյունաբերության ոլորտում աճի հաշվին: Գյուղատնտեսության և շինարարության ոլորտների նման ցածր տեսակարար կշիռները պայմանավորված են սեզոնային առանձնահատկությամբ: